

## ԳԱՐԻԿ ԱՐՏԱՇԵՍԻ ԲՈԹԱՆՁՅԱՆ

Ծնվել է 1976թ. մայիսի 1-ին Երևանում, ծառայողի ընտանիքում:

1982-1992թթ. սովորել է Երևանի Լ. Արիսյանի անվան թիվ 127 միջնակարգ դպրոցում: 1992-1998թթ. ընդունվել և ավարտել է «Հայրուսակ» համալսարանը՝ տնտեսագետ-մենեջերի որակավորմամբ:

1992թ. աշխատել է «Բասեն» ֆիրմայում որպես փականագործ:

1994-1995թթ. ծառայել է ազգային բանակում:

1996-2006թթ. աշխատել է «Բասեն» ֆիրմայում որպես ապրանքագետ:

2005թ. նոյեմբերից «Սիփան 1» համատիրության կառավարիչն է:

2006 թ.-ից Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է:

Հայաստանի հանրապետական կուսակցության Քանաքեռ-Զեյթուն տարածքային կազմակերպության խորհրդի անդամ է:

2008թ. ընտրվել է Քանաքեռ-Զեյթուն համայնքի ավագանու անդամ:

